

# ԴՐՕՇԵԿ

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՊՕԼԻՍ—ԿՕՄԻՍԷՐ ՀԱՃԻ ՏԻԳՐԱՆԻ

Ս Պ Ա Ն Ո Ւ Մ Ը

Սօֆիայից մեզ հեռագրում են.—

Յունիսի 2-ին (ն. տ.) երեկոյեան ժամը 8-ին Կ. Պօլսում դաշնակցական մի ահաբեկչի ձեռքով սպանեցաւ նշանաւոր պօլիս-կօմիսէր ՀԱՃԻ ՏԻԳՐԱՆԸ: Զարնողը պատ և ապահով է: Ընդհանուր սարսափ կառավարչական շրջաններում և մեծ ուրախութիւն ու խանդավառութիւն ժողովրդի մէջ: Մանրամասնութիւնը նամակով:

Ս Ա Ս Ո Ւ Ն

Օ Գ Ո Ս Տ Ո Ս Ի 13

13-ն Յունիսի 1895 թ.

1894 թւականի Սասունի կոիւր, որ սկսեց իսկապէս յուլիս ամսի 23-ին և դադարեց օգոստոսի 24-ին Սասունի հսկայի Գրգօյի մահով, 30 տարւայ մեր յեղափոխական շարժումներից ամենափայլունը, հսկան է, իսկ նրա յեղափոխական և պատմական նշանակութիւնը շատ մեծ:

1894 թւականի Սասունի կոիւր իսկապէս առաջ է բերել մի այլ շրջան, նրանով սկսւում է մի այլ կեանք, նա բաժանեց հինգ հարիւր տարւայ ստրկական կեանքը ներկայից և հայ ժողովրդին վերածնեց. յեղափոխական տեսակետից նա վերածնող է, նա մի դարագլուխ է: Սխալ կը լինեն մեզ հասկացած, եթէ կը կարծեն, որ մենք սրանով հերքում ենք 30 տարւայ յեղափոխական շարժումների նշանակութիւնը: Ոչ, մենք շատ լաւ գիտենք, որ վերոյիշեալ տարիների շարժումները պատրաստեցին մի յեղափոխական ժողովուրդ, կրթեցին մի ամբողջ սերունդ, որ բոլոր երևոյթների մէջ կայ մի

ընդհանուր կապ, շարայարութիւն, որ մի երևոյթ հետեւանք է նախընթացների: Բայց և այնպէս, նա եղաւ այն յեղափոխական ոյժը, որ էլքստրականացրեց ամբողջ հայ ժողովուրդը ու նրան յեղափոխական դարձրեց. նա էր, որ իւր հարւածով բարձրացրեց դարերով ստրկացած ամբողջ ժողովրդի ոգին և աւելի ուժեղ կերպով զգալ տւաւ, որ ինքը մարդ է և պարտաւոր է պաշտպանելու իւր մարդկային իրաւունքները ու պատիւը, նա էր, որ, բոլորական սարսափներից յետոյ, մարդկութեան առջև հանեց սուլթանական լէշակեր կառավարութեան զազրալի, գարշելի լիակատար պատկերը ու ազնիւ սրտերում զզւանք և զայրոյթ առաջ բերաւ, վաստակելով նրա՝ մարդկութեան համակրութիւնը, որ մի խրախուսանք, հոգեկան բաւականութիւն է կուրի դաշտում:

1894 թւականի Սասունի կոիւր բռնակալութեան մտաւուտ անկումն աւետեց, իսկ բռնաբարւած ժողովրդին ապագայ խոստացաւ. նա Հայաստանի նոր կեանքի կարապետն է, նրանով հիմք է դնւում նրա լաւ ապագային և սկսւում է հակառակ հոսանք. բռնաբարւածի ու անպատւածի ջարդաւած, փշրած սրտում սկսում է բաբախել արև օրեր տեսնելու յոյսը, չքանում է վհատութիւնը և նա սիրտ է առնում, իսկ բռնակալի, բռնաբարողի սև սիրտը դող է ընկնում և սկսում են նրան կրծել յուսահատութիւնը ու սև օրեր տեսնելու երկիւղը:

Եւ իբրև այսպիսի մի նշանաւոր պատմական անցք, մենք պարտաւոր ենք յիշել այդ ու յիշեցնել եկող սերնդին, թէ կրթական-յեղափոխական, թէ պրօպագանդայի ու ագիտացիայի տեսակետից և թէ, վերջապէս, իբրև ապագայ աւետող, իբրև յեղափոխական-պատմական մի վերածնող անցք:

Իսկ 1894 թւականի Սասունի կուր մարմնացումը օ գ ո ս տ ո ս Ի 13-ն է (ն. տ. 25-ը):

Այդ օրն էր, որ ամբողջ Սասունը բոլոր կողմերից շրջապատւած էր թշնամեց և նրա տեղացող թնդանօթների ու գնդակների հարւածների տակ հերո-

սաբար կուի էր մղում. այդ օրն էր, որ Սասունը վերջնական հարած էր տալիս կազմակերպած ու բոլոր միջոցներով զինւած թշնամուն, կուի դաշտում նրան ի փախուսա մղում. այդ օրն էր, որ Սասունի բոլոր քաղերը՝ հսկայ Գրգոյից մինչև Արպօն, միասին ու միաժամանակ մասնակցում էին կուին. բայց այդ օրն էր և նրա յաջող կուի վերջին օրը. Սասունի 94 թ. կուի ամենից հեկուն, փառաւորը ու հսկան օգոստոսի 13-ն է կուի, որ անընդհատ տեւց 27 ժամ. այդ օրը Գէլի-Գուզանի և Անտօքի հերոսական ճակատամարտն է:

Ամենափառաւոր ժառանգութիւնը, որ մենք թողնում ենք մեր սերնդին, այդ կուին է. հինգ դար է ստրուկ, ճնշած, կեղեքւած ենք, հինգ դար է ջարդւած, անպատւած, բռնաբարւած ենք. ի՛նչ էր մնացել մեզ, ի՛նչ էինք մենք: Չէր մնացել ոչ մի սրբութիւն, ոչ մի մաքրութիւն. կորցրել էինք սմէն բան, լիբր, լիտի, գարշելի մարդկանց քմահաճութեան և տրամադրութեան տակն էինք դրել՝ մեզ, մեր աշխատանքը, մեր պատիւը, մեր քոյրերը, մեր մայրերը, մեր կանայք ու երեխաները. ինչո՞ւ էինք ապրում. . . Մեզ ժառանգութիւն այս էին թողել մեր նախահայրերը և մենք ամենայն խոնարհութեամբ տանում էինք այդ անպատւաբեր, այդ ստոր ու գարշելի լուծը:

Իայց այսօր ծագում է նոր-օրւայ, նոր-կեանքի յուսոյ արեգակը, թէև շատ թանգ գնով, անթիւ զոհերով գնած. մենք պարտաւոր ենք յիշել նրանց, որ իրենց արիւնով, իրենց նահատակութեամբ հիմք դրին նորանոր յոյսերի, մենք պարտաւոր ենք տօնել այդ օրը, իբրև ազատութեան կարապետի տօն, իբրև յաղթական տօն:

Հոգ չէ, սուլթանական լիբր ու գարշելի կառավարութիւնը թող մերժէ իրեն առաջարկւած ռէֆորմները, ռէֆորմներ, որոնք «չարժեն այն թղթին, որի վրայ գրւած են», ինչպէս շատ ճիշտ կերպով նկատել է «Գէլի նիւս» թերթը. դա մի անխիղճ հեգնութիւն, մի անամօթ խաղ է, եթէ իրաւ այն է, ինչ որ լրագիրներն են յայտարարել:

Մենք շատ լաւ գիտէինք, որ այդ ռէֆորմների առաջարկութիւնը մի հակառակ-հարւած է՝ յետ մը զելու հայ ժողովուրդը յեղափոխական շարժումից, որ դա մի միջոց է յեղափոխական շարժման առաջն առնելու, որ կարող էր Արևելեան խնդիրը նորից բորբոքելու պատճառը դառնալ, բայց ոչ այս աստիճան էլ ողորմելի միջոցներով: Եւրոպական պետութիւնները իրենց այդ անյաջող մանեօվորով, խաղով, իրենց այդ վարմունքով հակառակ հետեանքի են հասնում. նոքա թարմ փաստերով նորից համոզում են բազմաչարքա

հայ ժողովուրդին, չթողնել յեղափոխութիւնը և յեղափոխականներին, լինել միշտ նրանց հետ ու նրանց բարեկամը: Իսկ յեղափոխականներս կարող ենք շնորհակալ ու երախտապարտ լինել պետութիւններին, որ լինելով մեզ թշնամիներ, այնուամենայնիւ օգնական են հանդիսանում յեղափոխականներս. մենք կաշխատենք ի չարը չգործ գնել այդ ծառայութիւնը և օգուել նրանից:

Եւ հասկանալի է, որ այս ողորմելի, «իրենց թղթին չարժող» ռէֆորմները չեն, որ մեզ առիթ են տալիս առաջարկել հայ ժողովուրդին յիշել, տօնել Սասունի 1894 թւականի կուիը օգոստոսի 13-ին, իբրև ամենանշանաւոր օրը բոլոր կուիներից. ո՛չ Այլ ընդհակառակը, մենք միաժամանակ արտայայտած կը լինենք և մեր բողոքը այդ հակամարդկային, այդ անխիղճ ու տմարդ վարմունքի դէմ: Սասունի 1894 թւականի կուիը մենք չենք նսեմացնիլ, նա մեր նոր-կեանքի կարապետն է, նա վերածնող է:

Ճիշտ երկու ամսից յետոյ լրանում է 1894 թւականի Սասունի հերոսական կուի միամեակը.

Տօնե՛նք,  
Տօնե՛նք օգոստոսի 13-ը իբրև յեղափոխական տօն,  
Տօնե՛նք Գէլի-Անտօքի հերոսական ճակատամարտը:

**Մ Ա Յ Ի Ս Ի 11-Ի Ժ Ո Ղ Ո Վ Ի Դ Ա Յ Ի Ն Յ Ո Յ Յ Ը**

Յոյգերու և յոյսերու խանդավառութեան օր մը եղաւ Համբարձման հինգշաբթին:

Առտու կանուխ, ամեն կողմէն, հետիտան, ձիով, շոգեկառքով, խառն բազմութիւն մը կը դիմէր Ս. Փրկչի հիւանդանոցը, ուր յառաջագոյն հրատարակւած ազդարարութեան մը համեմատ, պատրիարքը հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանէր:

Համբարձման տօնը կատարելու տենչը չէր միայն, որ այդ մօտ 20,000 հայերը կը քաշէր, կը բերէր հօն, այլ իրենց ներքին յուզումներուն ելք մը տալու, իրենց արժանի պատրիարքին բերնէն մսիթարութեան խօսք մը լսելու, իրենց հայրենիքին բախտը վճռող աւետիք մը գողնալու անոր բերնէն. ահա այդ էր, որ կը մղէր սուար ամբոխը դէպի հիւանդանոցի դաշտ ու պարտէզը, որ աւելի քան չորս տարէն ի վեր ժողովուրդին անկեղծ ուրախութեան ձայն մը հնչած չէր:

Դեռ առտուն իսկ ոգևորութիւնն այնքան ուժգին էր, որ ամբոխէն մաս մը ուզեց վար առնել և բզկի բզկի ընել օսմանեան դրօշակը, որ կը ծածանէր հիւանդանոցին դրան վերև և հազիւ քանի մը «տէրտէրներու» ու «խոհեմներու» միջնորդութեան շնորհիւ այդ դիտաւորութիւնը գործ չգրւեցաւ:

Պատարագն սկսած է. փոքրիկ եկեղեցիին տարածութենէն տասնապատիկ աւելի բազմութիւն լեցած է գուրսը. ո՞վ է, որ կը լսէ պատարագը. «ամէն» ներ կը թնդան յանկարծ առաջին շարքերէն, որոնք հետզհետէ մեծ մեծ ախփներով կը կրկնւին բոլոր ետեւի շարքերուն մէջ, երբ պատրիարքը մաղթանքներ կ'ընէ մարդասիրական գաղափարներով լեցուն իր քարոզէն վերջը:

Թողովուրդը չի հասկնար անոր ըսածը, որովհետեւ, չի լսեր. բայց կ'ընթանի զգացումով, երեւակայութեամբ:

Պատարագի արարողութիւնը լինցած է. պատրիարքը շրջապատւած եկեղեցականներով ու ժողովներու անդամներով, կը յառաջանայ դէպի հիւանդանոց: Ծափեր ու կեցցէները կորոտան, համբոյրներ կը թռչին պատրիարքի ձեռքերուն, կուրծքին, քղանցքին: Յանպատրաստից թափոր մը կը կազմուի, որ կառաջնորդէ պատրիարքին յաղթական գնացքի մը պէս. ոգևորութեան ծայրագոյն աստիճանը կը հասնի, երբ յանկարծ ամբոխին մէջ հուժկու ձեռքեր կարմիր խաչով ձերմակ դրօշակներ կը ծածանեն. հազարաւոր բերաններ, հազարաւոր ձեռքեր մոլեգին կեցցէներով ու ծափերով դաշտը կը թնդացնէր: Զգացումները, որ շատունց ի վեր կաշկանդած էին, ազատ թռիչք մը ստացան և անհուն ոգևորութեամբ, սրտի խորքերէն, վիշտերու մէջ կոշտացած ձայներ կը հնչեցնեն ազգային նշանաւոր երգերէ: Խուճը մը աստին «Մայր Արարչին» կերգէր խանդավառ և տխուր, հոս ուրիշներ՝ երիտասարդ, կատաղի հնչիւններով «Զայնը հնչեց Երզրու մի լեռներէն» կորոտացնեն. մինչ անդին ծեր պանդուխտներ «Ծիծեռնակը» կը փորձեն իրենց խապոտ ձայներով: Այդ ընդհանուր խանդավառութիւնը մոլեգնութեան փոխուցաւ, երբ յաղթանգամ մշեցիներ «Հերիք որդեակը» սկսան:

Այդ միջոցին պատրիարքը, որ մտած էր յիմարանոցը այցելելու, դուրս կենէ և դէպի որբերու վարժարանը կուղղէր իր քայլերը: Պատրիարքը նորէն տեսնելով, ամբոխը «կեցցէ Իգմորլիան» աղաղակեց, բայց շուտով «կեցցէ Հայաստանը» խեղդեց բոլոր գոչումները: Այլ վախ չմնաց. այդ միակ բառը էլէքարացուց ժողովուրդը, թաշիկնակի, գաւազան, գլխարկ կը տատանին օդին մէջ. ֆէսը գեանէ գետին կը պատուութի, գաւազաններու ծայրը մշեցիի նաշխուն արախչինը կը բարձրանայ: Գրօշակները արդէն կը սկսին ծածանիլ և յանպատրաստից ճառախօսներ կը բարձրանան ուսերու, աթոռներու վրայ, որոնք Սասունը կը յիշեցնեն և «կեցցէ Յեղափոխութիւն», «կեցցեն դաշնակցականները», «կեցցեն հնչակեանները» յանկցի սուլթան Համիդ» կը պոռան: Աարդապետ մը այդ միջոցին փորձեց համոզելու ամբոխը, որ քիչ մը խոհեմ գտնուին և իրենց զգացումներն չափաւորեն. երիտասարդները ձեռքերնուն վրան բարձրացուցին խեղճ մարդը և «կեցցէ Հայաստանով» գոցեցին անոր բերանը, թող չտալով, որ իր խօսքը շարունակէ. հայր սուրբը ինքն ալ բռնկեցաւ և համոզելու տեղ, համոզւած ետ գարձաւ: Երբ ժամ մը ետքը պատրիարքը վարժարանէն ետ

կը դառնար ճաշարան մտնելու, երկու մշեցի կիներ դռն առջև կեցած «Ազնիւ ընկերը» նապեցին սրինգի վրայ: Յուզումներէն յոգնած, պատրիարքը քաշեցաւ քիչ մը հանգստանալու: Թողովուրդը այլ ևս գործ չունէր հիւանդանոցին մէջ. «ողջ» ք, պարտեզ» աղաղակը ամենքն ալ հաստատութեան դիմացի պարտեզը մղեց: Ամբոխը հոն խուժած միջոցին, դրան մօտ հանդիպեցաւ բանտէն նոր ազատուող ալէզարդ քահանայի մը, որ իր կերկեր ձայնը կը միացնէր անոնց կեցցէներուն: Թողովուրդը յուզւած, ծերուկը շրջապատեցին և սկսան համբոյրներ տեղալ անոր թոռմած այտերուն, մորուքին և ձեռներուն: Քիչ մը ետքը նորընծայ մը եկաւ պատրիարքի կողմէն յորդորելու որ քիչ մը չափաւորեն իրենց խանդը և ցոյցերը: Նորընծան պարտեզին մէջ, աղբիւրին քով կայնեցաւ, սպասելով որ լուսութիւնը հաստատուի. վերջապէս քիչ մը հանդարտեցան և տէր հայրը սկսաւ խօսել, բայց մը հանդարտեցան կողմէն յայտնեց՝ որ շատ ուրախ է ինչ... Սրբազանի կողմէն յայտնեց՝ որ շատ ուրախ է տեսնելով հայրը այդպէս սիրով, բայց կը փափագի, որ այդ սէրը ոչ թէ ժամանակաւոր, այլ յաւիտենական ըլլայ և հաստատուն: Ծափերն ու կեցցէները կը միջակէտէին տէր հօր խօսքերը:

Թափորներ վերստին սկսան կազմուել, ծեր, տղայ, երիտասարդ, ծառի ոստեր ձեռքերնին, դրօշակներով արդէն սկսան իրենց երգեցիկ գնացքները պարտեզին շուրջը, մինչ ներսը հիւանդանոցին մէջ, ուր կը ճաշէր պատրիարքը. բազմաթիւ հրաւիրեալներու հետ, կենացներ կառաջարկէին և ատենաբանութիւններ ու ճառեր կը խօսէին, ոչ անմասն դուրսը տիրող խանդավառութիւնէն:

Երեկոյեան դէմ, պատրիարքին մեկնելէն ետքը, ցոյցերը ոչ միայն շնազեցան, այլ աւելի ևս սաստկացան Ոստիկանութիւնը փորձեց երիտասարդ մը ձերբակալելու, բայց ամբոխը խեց անոր ձեռքէն. հետեւանքն այն եղաւ, որ խոհեմութիւնը համարեցին բնաւ չմիջամտելու. բայց բազմաթիւ լրտեսներու շնորհիւ կրցան նշանակել շատերու անուններ. հետեւեալ օրն իսկ 50 հոգիի չափ ձերբակալեցան և տակաւին ձերբակալութիւնները կը շարունակէին և շատերը կը մնդուին:

Այդ օրը թէև, ինչպէս ըսինք, ոստիկանութիւնը խոհեմութեամբ չմիջամտեց, վախնալով հակառակ պարագային մեծ կոտորածի մը հանդիսավայր անել Փրկչի պարտեզը, բայց ամենայն աջալըջութեամբ հետեւեց և նշանակեց ցոյցի առաջնորդները, որոնց թիւը, կըսուի, 500-էն աւելի է:

Ծպտեալ ոստիկաններու և լրտեսներու թիւը նոյնպէս հարիւրներու կը հասնէր. ոստիկանութեան նախարար Նազեմ փաշան ևս ծպտեալ հոն էր: Բազմաթիւ հեծեալ ոստիկաններ ևս պարտեզի շուրջը բլուրներու վրայ անթարթ աչքերով կը հսկէին:

Եթէ այդ ցոյցի հետ ժողովուրդը միացնէր և գործը, բզիկ բզիկ անէր ոստիկանները, կոտորէր հարիւրաւոր լրտեսները, սպանէր նոյն իսկ ծպտեալ արիւնարբու Նազեմ փաշան, աւելի գոհ պիտի ըլլայինք: Այժմ գործելու ժամանակն է, գործով, արիւնով ցոյց անելու է և

ոչ թէ վերսկսելու է մեր վաղամեռիկ տխրայիշատակ սահմանագրական-ձպուռի ցոյցերը...

ԱՊՐԻԼ 3-ԻՆՅՈՅՅԸ ԲԵՐԱՅԻ ԳԵՐԵՉՄԱՆՈՅԻՆ ՄԷՋ

Պօլսի մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելեն մեռելոցի տօները. ժողովուրդը գունդագունդ կը դիմէ արուարձաններուն մէջ գտնուած ծանօթ գերեզմանոցները, ուր ամբողջ սերունդներ կը հանգչին անվրդով, և որոնք կը ներկայանան իբր յուշարարներ պատմական անձերու և անցքերու:

Այդ օրը, ապրիլի 3-ին, Զատիկի մեռելոցին երկուշաբթի, խուռն բազմութիւն մը գրաւած էր Բերայի հայոց հոգեհար գերեզմանոցը, — հոգեհար այն կարգ մը ծանօթ խնդիրներու շնորհիւ, որ ծագեցան ժամանակի Ազգային Վարչութեան ու կառավարութեան միջև, — որուն յատուան մէջ տիրանուն եպիսկոպոս մը, Բարթուղիմէոս Պուրայի վնասուած առաջնորդը, անգ պատարագելու հրաւիրուած էր: Պատարագի աւարտումէն ետքը, հին սովորութեան մը համաձայն, հոգեհանգստի պաշտօն մը պիտի կատարէր գերեզմանոցին շրջափակին մէջ անփոփած նահատակի մը շիրմին վրան: Իր ունայնամտութեամբ ալ ծաղրելի ու զգուշ եղած եպիսկոպոսը ոստիկաններ կը հրաւիրէ կարգ պահպանելու թափորի առաջանալու ատեն: Ժողովուրդը, արդէն յուզուած գերեզմանոցին յարուցած պատմական յիշատակներովը, կը վրդովի եպիսկոպոսին այդ անվստահութիւնէն և խորապէս վշտացած այդ վերաւորանքէն, կսկսի աղաղակել թէ իրենք թուրքերէն պէտք չունին դաս առնելու հայ արարողութեան մը պատշաճ յարգանքն ընծայելու համար և խօսքը գործի փոխելով կը հրին, կը հրմշտին ոստիկաններն ու զինուորները և բռնի կը հեռացնին:

Արարողութիւնը հազիւ վերջացած՝ ժողովուրդը կը սկսի իր ուրախութեան և սովորական զարճութեան անձնատուր ըլլալ: Ամեն կողմէն կը լսին հրագէտներու պայթիւն, ուստագնացութիւններու ատեն աւանդական անհրաժեշտ եղած բան մը, սովորութիւն, որ յոյներն ալ կը պահեն սիրով: Սակայն ոստիկանները, որոնք ամեն պայթիւն յեղափոխական շարժման մը բռնկելը կը կարծեն, ահ ու սարսափի մէջ կիչնան: Հրագէտներու երեւումը հայ ձեռքերու մէջ զայրոյթ կը պատճառէ, մանաւանդ իրար կանցնին, երբ դաշնակցական քաջարի երիտասարդի մը ձեռքին մէջ կը նշմարին ընտիր ուժովէր մը: Յեղափոխական մը ձերբակալելու, բռնելու յոյսով ոստիկանները միահամուռ կը խուժեն երիտասարդին վրան, բայց հաշիւը սխալ եղած էր. ժողովուրդը ի նկատի առած չէին, այն ուժը, որ օրէ օր սպառնալից դիւր մը կատանայ իր կեղեքիչներուն հանդէպ: Կատարութեան, զայրոյթի աղաղակ մըն է, որ կը բրդի ամեն կողմէն: — «Ո՞վ իրաւունք տուաւ ձեզ գալու, քիթերնիդ խոթելու մեր զարճութիւններուն մէջ կը գունայ խլացնող ձայն մը ամբոխին միջէն, մենք օր մը

օրանց ձեր պայրամներուն խառնած, արգելք եղած ենք:» — «Ա՛յ ինչ լրբութիւն է, կը պոռար հուժկու կոկորդ մը, ինչո՞ւ յոյներն իրաւունք ունին զէնք արձակելու և մենք ո՞չ, հէ՛, ինչո՞ւ:» Եւ տիպոց մըն է կըսկսի: Թուրքի կոյր, տգէտ մոլեռանդութեան, ոստիկանների զաղրելի լրբութեան դէմ կուտակուած դարշանքն և մաղձը կը պոթկայ սրտերէն: Ժողովուրդին աչքին ալ բան մը չերեւար, ամենքն ալ միահամուռ կ'իչնան ոստիկաններու ու զինուորներուն վրան, ոչ միայն ազատելու երիտասարդն, որ քաջբար կընդդիմանար, այլ և դաս մը տալու այդ կոպիտ պաշտօնեաներուն:

Ամբոխի կատարութեան առջև շուտով ընկրկեցան ոստիկանները ու զինուորները. իրենցմէ մէկը այդ միջոցին կը փորձէ դուրս ելլալ գերեզմանատնէն, մերձակայ զօրանոցէն օգնութիւն պահանջելու համար, յաղթ մշտցի մը, դաշնակցական, կը հասնի ետքէն ու կուսի մէկ հարածով գետին կը փռէ զինուորը:

Մինչ աստին՝ գերեզմանոցին մէջ, գործն այդ կերպարանքը կը ստանար, անդին՝ Բերայի զօրանոցներուն մէջ, ուր ընդհարման լուրը հասած էր արդէն, մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնին, իսկոյն խեղդելու համար այդ նոր ապստամբութիւնը: Աէս ժամ չանցած, 500 զինուորներ վազէ վազ կը հասնին և կը պաշարին գերեզմանոցը չորս կողմէն, մինչ հետէ ուրիշ մաս մը ներս կը մտնէ խուզութիւնը զսպելու համար սեխներով: Բայց ալ ուշ էր. սեխներուն տեսքը և զօրքի շատութիւնը ժողովուրդը չը վախցնելէ զատ, աւելի ևս կը կատողեցնէ: Ճակատ ձակտի, կուրը կըսկսի, մեծամեծ համեմատութիւններ անել սպառնալով: Ժողովուրդը կը դիմադրէ ամեն կարելի միջոցներով. մինչ ոմանք քարերով կը յարձակին զօրքին վրան, աւելի յանդուգներ զինուորներու ձեռքէն սեխներ կը խին և անոնցմով կը վերաւորին...

Աւազներու աղաղակը, տղաքներուն ու կիներուն վայնասունը, զինուորներուն գալուստը փանիկ մը կը ձգէ վերին Բերայի մէջ: Ո՞վ գիտէ գործը ինչ աղետալի կերպարանք կընար ստանալ եթէ այդ միջոցին չանցնէր գերեզմանոցին մօտէն ուսական դեսպանը, որ թուրքերուն այդ յիմարութիւնն ալ դարմանելու կը փութայ, իսկոյն յայտնել տալով պէտք եղած շրջանակներուն, որ զգուշանան նոր Սասուն մըն ալ Պօլսի մէջ առաջ բերելէն: Բարձրագոյն եկած հրամանի մը համեմատ, յոգնած զինուորները ետ կը կանչին, գերեզմանոցը կը բացւի և ժողովուրդին թողլ կը տրւի ցրելու:

Այս դէպքը շատ մեծ տպաւորութիւն առաջ բերաւ հասարակութեան վրայ. կառավարութիւնը աչք վախցնելու համար քանի մը ձերբակալութիւններ կատարեց հետևեալ օրը, բայց նոյն օրն էր, որ մարդ մը յաղթական կերպով կը մտնէր Բերայի հայոց թաղ. խորհրդարանը և սեխ մը յանձնելով ատենապետին, կը խնդրէր, որ պաշտօնապէս իր տիրոջը վերադարձնէ, որովհետև, կըսէ, հիմայ ալ պէտք չունիմ, իսկ պէտք եղած ատեն նորէն կընամ ձեռք անցնել:

Սուլթանն այնքան չարացած էր այս անցքէն, որ

Տրամայեց հետեւեալ օրն իսկ արձակել իր պալատի մէջ պաշտօնավարող հայերը (սպասաւոր, խոհարար և այլն):

Այսպիսով նշանաւոր օր կը մնայ ապրիլի 3-ը, ժողովօրային գիտակցութեան ինքնաբարեբար արտայայտութեան հետզհետէ յաճախ կրկնուող դէպքերէն մէկը, միահամուռ ազգային յեղափոխութեան պատրաստիչները պիտի ըլլան մօտիկ ապագային մէջ:

### ՏՐԱՊԻՋՈՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՄԱՆԸ

Մայիս 15-ին Տրապիզոնի առաջնորդ տ. Եղիշէ ծ. վարդապետ Այվազեան՝ երկու բազկերակները կտրելով, անձնասպանութիւն փորձեց, բայց չյաջողեցաւ: Յաջորդօրը, մայիս 16-ին երեկոյեան մօտ, հիւանդապահները խաբելով, անմիջապէս ինքզինքը առաջնորդարանի վերի սրահի պատուհանէն փողոց նետեց և մեռաւ: Պատրիարքի բացառիկ թոյլաութեամբ՝ թաղումը հանդիսով կատարուեցաւ մայիս 18-ին:

Առաջնորդը Սասնոյ կոտորածէն և Եւրոպայի համակրական ցոյցերէն ի վեր բոլորովին փոխած էր իր քաղաքականութիւնը և մանաւանդ վերջի ամիսներու մէջ, յունւար 30-էն սկսեալ իր քարոզները մեծ մասամբ յեղափոխական էին: Կառավարութիւնը տեսնելով այս՝ կատաղութենէն ինչ ընելիքը չէր գիտեր: Սակայն առաջնորդի մարտ 25-ի, Ծաղկազարդի օրւայ տւած քարոզը այնչափ կը փրփրցնէ կառավարութիւնը, որ խողովոտ կուսակալը ամեն օր հեռագիր հեռագրի վրայ Բ. Դուռը կը քաշէ, փաստելու համար՝ թէ «առաջնորդը ամենաառաջին խռովարար մ'է և բացէ ի բաց հաւատարիմ ժողովուրդը յեղափոխութեան կը գրգռէ ան»: Բ. Դուռն ալ ձեռքը ոտքը դող ելած, խիստ ծանուցագիր մը կը ղրկէ պատրիարքին՝ պահանջելով առաջնորդի պաշտօնակազմութիւնը: Պատրիարքն ալ պաշտօնագրով մը ապրիլի մէջ բացատրութիւն կուզէ առաջնորդէն անցած դարձածին վրայով. այդ պաշտօնագրի պարունակութիւնը սոսկում կազգէ առաջնորդին: Սակայն վախին հետ յարաբերութիւններն ալ աւելի թշնամական գոյն մը կ'առնեն: Այլի ըսած այդ նենգամիտ գաղանք թոց գիւղի դպրոցը քանդել կուտայ, կառավարական փտած ժողովներու անգամակցութեան համար ամենագծուծ խնդիրներ կը հանէ, լուսաւորչականներու և կաթողիկոսներու միջև թշնամութիւն կը սրբուէ, հայ բանտարկութեանց թիւը կը շատուցանէ, հայերուն վնասելու և մանաւորապէս առաջնորդին թըշնամանալու, անպատելու դիտումով:

Առաջնորդը կառավարական հալածանքէն յուսահատած, մտադրեց Պոլիս երթալ մայիս 13-ին. սակայն տգէտ ամբոխ մը թելադրելով յիմարէ մը, կարծեց թէ առաջնորդին մեկնումը ներքին թշնամութեան արդիւնք է և խուժեց առաջնորդարան, բայց փոխանակ թև ու թիկունք ըլլալով առաջնորդին պաշտպանելու զայն կառավարութեան գէմ, սկսաւ յիմարական ցոյցերով

առաջնորդին ուժը ջլատել և չհասկանալ առաջնորդին քաղաքական կացութիւնը ու արդէնք եղաւ մեկնելուն:

Այն օր կառավարական պաշտօնականներ առաջնորդարան գալով, պաշտօնապէս բացատրութիւն ուղեցին ամբոխի գրգռման և իր երթալու պատճառներու մասին: Առաջնորդը խորապէս յուզեալ յայտարարեց.

«Ես կերթամ բոլորովին կուսակալէն ու կառավարութենէն հալածուած. այդ ինչ լրբութիւն է ու խայտառակութիւն կառավարութեան վարմունքը. պարբերաբար տասնեակներով անմեղ հայ գիւղացիներ ամիսներով կը բանտարկէ լոկ կաշառքի և միմիայն կաշառքի համար. դատարաններու մէջ արդարութիւն չկայ. -- օրինակի համար՝ Ազնաւորեան եղբարց նման պատուաւոր վաճառականներ տարիով բանտը կը փթեցնէք, զանոնք կողոպտել տալով թուրքերուն. ամեն բան կամայականութեան դատապարտուած է. դպրոցներ կը քանդուին առանց օրէնքի, կուսակալը օրէ օր խոչընդոտներ կը հանէ ինձ դէմ, որպէսզի զիս ամբլութեան դատապարտելով՝ չկրնամ ապրել հոս. շարունակ ինձ նկատմամբ կը գրէ ու կը գրէ, եթէ հայի ոչնչացման կաշխատի, նախ թող զիս վերջացնէ. գացէք ըսէք կուսակալին, ես իր հալածանքէն կը թողում թեմը, ինչ որ պիտի ընէ, թող ընէ»:

Կառավարութիւնը արեան յուզման ձայն առնելուն պէս այնչափ սարսափեցաւ և ինքզինքը կորուս, որ անմիջապէս 100-150 զինուոր զինած պահակախոցէն Մէյտանի կողմը ղրկեց, բայց վախելով, որ մի գուցէ հրացանի դնդակները պակաս գան, բեռնակրիքով ալ գընդակ հասցուց զինուորներուն. կատարեալ պատերազմ: պատրաստութիւն մի բուռն հայ անպէն ամբոխի դէմ: Ինչ քաջութիւն, ինչ անզուգական աջալընութիւն: Բայց կերևի, թէ հասկցաւ իւր ծիծաղելի դիրքը և չմիջամտեց այն օրւայ ցոյցին:

Առաջնորդը վերին աստիջանի յուզած և իր առած քայլէն սարսափած, երկու օր վերջը անձնասպան եղաւ թէև, սակայն նա զոհ գնաց կուսակալի բունաւորութեան Տ. Եղիշէ զոհ մ'է կառավարութեան գազանութեանց և իր վերջին վարմունքով նախատինք մը Տրապիզոնի հայ հասարակութեան:

Նորա մահուան բուն պատճառը կուսակալն ու կառավարութիւնն է: Թողունք իւր ոչ փայլուն անցեալը, թողունք իւր թուլասրտութիւնը և իւր տխուր անձնասպանութիւնը, որ իւր հոգեկան ուժի չզոյուցութիւնը կը յայտնէ. թող որ նա Զէքիի և Թահսիի սեփններու դիմաց չէր գտնուէր և իւր միջոցներով շատ լաւ կարող էր ազգին շահը պաշտպանել ողջամբ և ոչ թէ անձնասպանութեամբ: Բայց ինչ որ ըլլայ, ժողովուրդը, նրա մահը յեղափոխական է, նրա մահը արդիւնք է թիւրքեայի մէջ տիրող դժոխային ըէժիմի և նա ողջ զոհ մ'է կուսակալի գազանութեան:

Ժողովուրդը, նա քեզ այս պարզեց և դու չի հասկցար. քու հայութեան երգեալ թշնամին, սուլթանի կառավարութիւնն, հոն կանգնած է ծաղրածու և գազանային հրճանքով, ուրախ՝ քու առաջնորդիդ մահուան համար, գոհ իր խմած արիւնէն, ձեռքերը շփող՝

քու գրած ծանր նախատիքիդ համար:  
 Տրապիզոնի հայ, եթէ դու խելք ունիս, մի ատիր քեզ, մի կրկնար քեզ դէմ, մի՛ խենթերէ առաջնորդ-  
 ւիր:  
 Եթէ քու ցաւդ անկեղծ է, լուծէ՛ վրէժդ մարդա-  
 կեր կառավարութիւնէն:  
 Եթէ դու իրաւունքիդ գիտակցութիւն ունիս, ուղղէ  
 հարւածդ լէշակեր գազան կառավարութեան՝  
 Քանի գոյութիւն ունենայ նա, քու դժբաղդութիւնդ  
 ու թշուառութիւնդ անպակաս պիտի ըլլայ, քու նախա-  
 տիքդ ճակատիդ վրայ դրօշմած պիտի մնայ:  
 Նախատիք կայ քու ճակտիդ վրայ, միայն և միմիայն  
 արդար վրէժառութիւնդ պիտի սրբէ զայն:

Ն Ա Մ Ա Կ Կ Ա Ր Ի Ն Ի Ց

Փարունը բացւեց և աւազակ քիւրդերի և զինւորնե-  
 րի համար գարձեալ բացւեցին աւառարութեան և մար-  
 քասպանութեան օրերը: Ա. Յարութեան գիշերը կողոպ-  
 տել է Շխտակ գիւղի եկեղեցին. այդ գիւղը գտնուում  
 է Վարինից 8 ժամ հեռու: Կողոպտողները եղել են  
 տաճիկները: Հետքը գտնուել է մի տաճիկ գիւղում:  
 Տեղոյս առաջնորդը բողոքեց վալիին, բայց աւազակնե-  
 րը դեռ չեն ձերբակալուել: Կողոպտուեց Հերթե գիւ-  
 ղի ուստի տունը, որի վնասը հասնում է մօտաւորապէս  
 200 ոսկի:

Կարինից կէս ժամ հեռաւորութեան վրայ գտնուող  
 կէս հայ կէս տաճիկական գիւղում մօտ օրերս վեց  
 զաւթիայ հարկահաւաքներ մտնում են հարկ հաւա-  
 քելու: Երկու եղբայրներ կապուում են սիւնի վերայ,  
 չարաչար ծեծւում և այժմ մերձի մահ պառկած են  
 անկողնի մէջ:

Այս բանի համար գիւղացիք դիմեցին առաջնորդին.  
 նա էլ բողոքեց վալիին, բայց իզուր. չարագործները  
 մնացին առանց պատժի:

Ժողովուրդը խիստ նեղ վիճակի միջ է. չեն կարո-  
 ղանում հարկերը վճարել: Իսկ հարկահաւաքները հար-  
 կի փոխարէն խլում են հայ գիւղացոց այն, ինչ որ աչ-  
 քի է հանդիպում՝ եզ, կով, ոչխար, կանանց զարդեր,  
 նոյն իսկ բերեցին քաղաք և ծախեցին պարկելու ան-  
 կողիններ: Մի քանիսնների հաքից հանել են չմաշած  
 զգեստներ... Ժողովուրդը անելանելի գրութեան մէջ է.  
 որ աւուր սպասում են ազատութեան ձայնը լսելու:  
 Այդ յոյան է, որ նորք գեռ համբերում են այս բռն-  
 նութիւններին...

Ամսոյս 15-ին Գիսպրիքոյ կարմունջի վրայ բռնուում  
 են երկու հայ կարնեցի երիտասարդ, որոնք Բասենից  
 գալիս էին քաղաք: Սոցա բռնում են ութը սպառա-  
 վէն համիդիէ զինւորներ: Նախ վերաւորում են նշան  
 համալի որդուն. ապա միւսին վերաւորելուց յետոյ  
 աւազակները թաղելով սրանց տանում են կարմունջի  
 մօտ գտնուող լեռան միւս կողմը, որտեղից մօտիկ է Բի-  
 փրիքոյ հայ գիւղը: Այնտեղ սաստիկ տանջում են

հայերին, մերկացնում են և սկսում են ասել. «հայ-  
 հոյեցէք ձեր Յիսուսին, եթէ չէք հայհոյի, կսպանենք  
 ձեզ»: Հայերը չեն հայհոյում. երեք ժամ չարաչարե-  
 լուց յետոյ վրայ են հասնում գիւղից հայերը՝ լսելով  
 իրենց նախընթաց եղելութիւնը: Երբ գիւղացիք մօտե-  
 նում են, աւազակները թողնում են և հեռանում: Գիւ-  
 ղացիք վերաւորներին գիւղ են տանում և ինամում են  
 նոցա վէրքերը: Այսօր նրանք եկան քաղաք յայտնե-  
 ցին տեղոյս դատարանին իրանց վիճակը: Ոստիկանա-  
 պետը բարկանում է և դուրս է վռնգում հայերին: Քա-  
 ղաքիս մէջ նոյնպէս անպակաս են աւազակութիւնները:  
 Օր ցերեկով զինւորները կողոպտեցին մի հայի և մի  
 տաճիկ մաքսատան պաշտօնիայի: Տաճիկ գիւղացիք նոյն-  
 պէս շատ նեղութիւն են տալիս հայ դրացիներին: Մօտ  
 օրերս Սոխըրմուկ գիւղից մի քանի հայեր գալիս էին  
 քաղաք: Ճանապարհին մի քանի տաճիկներ ստիպում  
 են նրանց, որ պէտք է իրանց շալիկն և տանին քա-  
 ղաք: Հայերը վախենալով թուրքերից, առնում են նոցա  
 իրանց շալիկը և բերում մինչև քաղաքիս շրջապատը:

Վանից բերին կապանօք և տարան Պօլիս Գանիէլ  
 վարդապետ Կոստանանին և երեք քահանաների: Մու-  
 րատին և Խարախանեան վարդապետին այս օրերս պի-  
 տի բերեն Մուշ Յանձնաժողովին ներկայանալու համար:

Ն Ա Մ Ա Կ Գ Ր Ո Ւ Ս Ա Յ Ի Ց

Ապահովելու համար թէ թուրք կառավարութիւնը  
 որպիսի վայրենի ընթացք բռնած է հայութեան դէմ  
 և թէ ինչ բարբարիկ միջոցներով՝ կեղեքումներով աշ-  
 խատած է ու կաշխատի բարոյապէս ու նիւթապէս ո-  
 չնչացնել հայ տարրն, բաւական է լուր ուշադիր ակ-  
 նարկ մը նետել հոն, ուր հայեր հաստատուած են, հոն,  
 ուր անոնք իրենց աշխատասէր ոգւով և զարգացման  
 ու քաղաքակրթութեան ընդունակ խառնածքով յա-  
 ջողած են տիրող տարրէն աւելի վեր բարձրանալու:

Հայերը բազմաթիւ են կուսակալութեանս մէջ, մա-  
 նաւանդ Կէմէլիի և Բազար գաւառակներու մէջ, ինչ-  
 պէս նաև Իգնիմիտի շրջականներն: Մեծամեծ աւաններ  
 լի են հայ ազգաբնակչութիւնով, ինչպէս Պարտիզակ,  
 Ատաբազար, Մեծ-Նոր-Գիւղ, Սէօրօջ, Չէնկիլէր, Օվա-  
 ճըգ, Միջագիւղ, Քարցի, Պէնլի, Քէրէմէթ և այլն...  
 Բաւական հանգիստ և դիւրակեաց վիճակ մը ունէր  
 այդ տեղերու հայ ժողովուրդն, բայց վերջին Ռուս-  
 թրքական պատերազմէն վերջը, վերջացաւ հայուն հան-  
 գստութիւնը. այլ ևս ապահովութեան մէջ չէին ոչ  
 անոր կեանքը, ոչ պատիւը և ոչ ալ գոյքը: Պարտուած  
 թուրքը գեաւորներէն իր վրէժը լուծելու համար  
 սկսաւ իր ձեռքին տակ գտնուած խեղճիկ հայը չարչոկել:  
 Աւերիչ մարախի խումբերու պէս, եկան թափեցան այս  
 կողմերը չէրքէզներ, գիւրձիներ, լազեր և այլն, գրա-  
 ւեցին սարերն ու ձորերը. այդ լեռնցի բարբարոսները  
 ապրելու ոչինչ չունէին և ոչ իսկ աշխատելու կամք:  
 ուստի սկսան կողոպտել հայուն ձին, ոչխարն, կովն,

դրամն, ի հարկին սպանելով ալ. ապա կանոնաւոր աւազակախմբեր կազմեցին և պարբերաբար լեռը հանեցին հայ հարուստ գիւղայինները:

Ամեն բողոք, ամեն գանգատ, ամեն դիմում անօգուտ եղան. կառավարութիւնը և ոչ մի վարկեան խորհեցաւ ապահովելու հայուն կեանքն ու գոյքը. իրաւ, երբեմն զրկեցան զինուորներու և ոստիկաններու խումբեր, բայց ասոնք աւելի գէշ պատիժ մը եղան հայ գիւղացիի գլխուն, վասնզի ասոնք փոխանակ երթալու լեռներն ու անտառներն աւազակներն հալածելու սկսան կարգաւ պատել, կարգաւ հայ գիւղերն կեղեքել, ժողովուրդը իրենց անօրինակ պահանջումներով՝ զօրանցներու մէջ անօթութենէ նիհարցած մարմիններն պարարտացնելու համար:

Թողունք մենք անցեալը, թողունք հին զոհերը, դառնանք մենք ներկային:

Անցեալ տարի օգոստոսի մէջ Քէրէմէթ գիւղի չորպաճի՝ Նիկողոս աղան խումբ մը տաճիկ աւազակներու ձեռքով լեռը տարեցաւ գիւղին միջէն: Խեղճ Նիկողոսը իր կեանքը փրկելու համար ստիպեցաւ իր ունեցածը չունեցածը ծախելու և աւազակները գոհացնելու, կառավարութիւնը և ոչ մէկ պզտիկ փորձ չըրաւ ձերբակալելու աւազակները, որուն վրայ Քէրէմէթի աղաներն յուսահատած ամիսներով Պօլիս թափառեցան:

Դարձեալ անցեալ տարի նոյեմբեր 3-ի գիշերը Մեծ-Նոր-Գիւղի Պէլէտիցէ՛ հափուշ Ստեփան Մակարեան, երբ գիշեր ատեն իր տունը պառկած կը գտնուի, կուգան իմաց կուտան, որ զպլըթան քեզ կուգէ. Ստեփան իր պաշտօնին բերմամբ կաճապարէ երթալ, բայց կը տեսնէ, որ ոչոք կանչած է զինքը. ուստի ինքն ալ՝ կասկածելով, որ դաւ մը չըլլայ իրեն դէմ, հետը հայ գիշերապահ մը առած կը դառնայ տուն. ճանքան քիւրդ Մուսա անուն հին չարագործ մը՝ իր դէմը ելնելով, հրացանին բունովը այնպիսի ուժգին հարած մը կուտայ գլխին, որ խեղճ երիտասարդը անշունչ կիչնայ գետին՝ անօգնական թողով ձերունի մայր մը, կին մը և քանի մը մանրիկ զաւակներ:

Կառավարութիւնը կը ձերբակալէ քիւրդ Մուսան և հայ գիշերապահը. վկաներով կը հաստատուի Մուսային մեղապարտ ըլլալը, քանի որ քանի մը օր առաջ ալ յայտնի սպանացներ էր. բայց շարաթէ մը Մուսան անպարտ կարձակուի և հայ գիշերապահը դեռ կը ճըգնէ բանտին մէջ, որուն միայն յանցանքն է, որ վկայ եղած է այս վայրագ ոճրին:

Մուսան խրախուսած, քաջալերած և նոյն իսկ խրատուած ոճրագործ կառավարութիւնէն, կը սկսի նոր նոր շահատակութիւններ ընելու. դեռ մի քանի օր առաջ Միջագիւղի մէջ զարկաւ Վարդան անուն երիտասարդ մը, որ թէև դեռ մեռած չէ, բայց վիճակը ծանր է. իսկ Մուսան ազատ համարձակ կը պտըտի և անշունչ վաղն ալ ուրիշ գիւղ մը կերթայ նոր սպանութիւն մը ընելու. սպասելով որ կառավարութենէն ընդունի շքանշան մը իր գործած քաջագործութեանց համար:

Չմոռանանք ըսելու, որ Մուսայի յայտնի պաշտպան է հիւրնկալ իր աղան՝ Մեծ-Նոր-Գիւղի Պէլէտիցէի րէ-

իզը, ինչպէս նաև մէջլիսը իտարէի անգամ, նշանաւոր հայատեաց Շէրիֆ աւազակապետը, որ միշտ այս տեսակ չարագործներ կը սնուցանէ իր և կառավարութեան հաշույն համար:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Դ Ե Ր Ջ Ա Ն Ի

III

Նախապէս տկարացնելու հետամուտ կըլլան գիւղացին՝ վառելով նրա ցորենի բարդերը, խոտերը եւ շատ անգամ ալ քչել տանելով նախիրը, հօտը եւ այլն: Առաջին անգամ, երբ կը մօտենայ հայ գիւղացին քիւրդ աղային, վերջինը փաղաքչելով կընդունի առաջինը: Հայ գիւղացուն այս առաջին քայլը գահավիժում մ'է դէպի անդունդը: Հազար զրուշ պարտք կընեն եւ 2-3 տարւայ մէջ քանի մը հազարներ կուտան, բայց պարտքը կը մնայ պարտք: Եթէ գիւղին մէջ գտնուի մէկն ալ, որ աղային հետ առեւտուր ընել չուզէ, վայ է եկեր գլխուն. անպատճառ պիտի պատժուի:

Չանախճիի մէջ մ'իտ. Դաւիթին տունը նշանաւոր էր: Շատ հեռուներէ այդ տանը մեղրն ու լաւաչը ուտելու կերթային: 6-7 տարի առաջ ունէին ընդարձակ հողեր, ջրբաղանջներ, հօտեր, փեթակներ եւ այլն, այսօր բան մը չէ մնացեր, անցորդ մը չկրնար հիւրնկալել այդ տունը: Նահապետական բազմամարդ տուն մ'էր մ'իտ. Դաւիթի տունը, 28-30 հոգի կը հաշւին տան անդամները: Հայրը, մեծ եղբայրները մեռած լինելով, Յովհաննէս քէհեայն տանը զըլուխը անցած էր: 1891 թ. սեպտեմբեր սմսոյ մէջ, գիշեր մը, հաւար կուգայ, թէ քրդերը Մղբեսոնց ջրաղացը կոխեր են: Յովհաննէս քէհեայն իր եղբոր որդիներով, ձեռքերնին մէյմէկ մահակ առած կը վազին, կարծելով թէ դործերնին բոլորի քրդերու հետ պիտի լինի եւ երբ կը մօտենան ջրաղացին՝ հրացանի գնդակներ կը սեղան վրանին: Յովհաննէս քէհեայն 2-3 գնդակէ ծանրապէս վիրաւորելով կիչնայ, ինչպէս եւ իւր եղբոր որդիներէն երկուսը: Կը հասկցւի թէ զարագէւրէնոցի Հասան աղան է ընել տուողը. ո՞վ պիտի համարձակի բողոքել, թէեւ բողոքն ալ ապարդիւն: Այդ տարի Մղբեսոնց երկու ջրաղացներն ալ կանցնի զարագէւրէնոցիներին:

Ղարագէւրէնոցին, ինչպէս նա եւ միւս աղաները, գիւղացոց սոմար մը ցորենը 200 զրուշի կը ցրին, յաջորդ տարին 500-ական զուրուշէն ժողովելու պայմանաւ: Ինչպէս ըսինք, նախապէս քիւրդ աղաները յելուզակութեամբ կաղքատացնին գիւղացիները եւ յետոյ կսկսին բոյն դնել անոնց մէջ. երբ մի անգամ տեղ մը հաստատուին, ուրիշ մարդ չկրնար գործ ընել: Կողերցի Մինասի այս գիւղերուն մէջ ունեցած առեւտուրը պատճառ եղաւ երկու որպոք գնդակահար լինելուն:

Աղաթերի մէջ զարագէւրէնոցին Սահակ քէհեայն գիւղին առջեւը ունեցած մէկ ընդարձակ արտին աչք կը տրուէ: 1890 թ. աշունը, երբ նոր ցանած կըլլայ արտը, չորս կոտ ցորեն ալ ինք սեփել կուտայ արտին երեսը: Յաջորդ տարին ութ սոմար ցորեն կելլէ այդ արտէն. զարագէւրէնոցին ձայն չհաներ: Երկու տարի վերջ, երբ ցորենի գինը կը բարձրանայ, կուգայ հաշի կը նստի Սահակ քէհեայն հետ իր չունեցած իրաւունքը կը պահանջէ. մարդը կապչի, կը շարի, ինչ ըսելիքը կը մոռնայ, ոտքը կը պագնէ, ձեռքը կը պագնէ, բայց անողոքելի կը մնայ Հասան աղան. 40

ուկի կուղեմ, կըսէ, եթէ ոչ հիմայ տունդ տեղդ կրակի կու-  
տան Գիւղացիք կուգան, կը միջնորդեն, հազար աղաչան-  
քով հազիւ կը կարողանան յիշեալ արտը ընդունել տալու  
չունեցած իրաւունքի փոխարէն Զմունանք ըսելու, որ  
առուծարի պաշտօնական գործողութիւններն ալ կատարե-  
լու համար, բաւական է, որ աղան մէքքէզը փուսուլ ա մը  
զրկէ. անմիջապէս թափուքեաթիպին կուգայ եւ իր  
պախիշիչը առնելով, աղային հրամանին համեմատ կը  
կարգադրէ:

Այս գիւղերը՝ Զանախճի, Աղաթեր, Հերոնի, Ծաղկարի,  
Վժան, ապրանքի գործ ընտղներն են: Դարադէրէնցի Հա-  
սան աղան, պէճէնէկցի Մէհմէդ աղային տղաքը, ֆէմիլ  
Մէհմէտ աղային տղաքը, Շիպ աղասին եւ ուրիշները, ա-  
սոնք ամենքն ալ 10-20 հեծեալ ու սպառազինեալ յերու-  
զակներով 3-4 ամսի չափ կը մնան այս աղքատ հայ գիւ-  
ղերու մէջ: Ինչիւր չեն ըներ, ի՛նչ կը քաշեն խեղճ գիւղա-  
ցիները՝ ամեն օր գառն, ոչխար պիտի մորթի, ձիերուն  
գարի պիտի զրի... Խեղճերուն տունը բան չէ մնացի ար-  
դէն. կերթան պարտքով կը գտնան ու կը բերեն այս գա-  
ղաններուն կը կերպուեն: Ինչպէս ըսինք, թահսիւլաթի  
համար ալ ամեն գիւղ 5-6 ժամտերմէ կայ ու կայ. ասոնք  
ալ քիւրդ աղաներէն ոչ ուսող անխղճութեամբ կը վարելի-  
ն հաշիւ տուրքի, ով որ ափ մը ցորեն ունի կամ կով մը,  
ոչխար մը, մինչև իսկ պառկելու համար մէկ հատիկ ցնցո-  
տի անկողին մը, ամենայն դայրագութեամբ կը քաշեն,  
կառնեն. ի՛նչ կընեն, այդ միայն իրենք գիտն. միայն ար-  
դէն յայտնի է, որ ընդ միշտ հաւաքած զրամները կէս առ  
կէս հաւաքէններուն գրպանները կը լեցնին Վերջապէս  
այսօր այս գիւղերու հայ բնակիչները առնտարակ աւուր  
հայի կարօտ չքաւորութեան են մասնաւոր: Աշխատելու  
կարող երիտասարդները պանդխտութեան մէջ կը տառա-  
պին, շատ մը կիներ ու անչափահասներ ալ երգնկա են այ-  
լուր մուրացկանութեամբ կը չըլին: Հողերնին ամբողջ  
քիւրդ աղաներուն անցած են, պարտքերնին մինչև վզերնին  
ալ տոկարու կարողութիւն չէ մնացել: 1-2 տարիէն ան-  
պատճառ այս գիւղերը քիւրդ աղաներու սեփականութիւնն  
պիտի լինին Այսչափ քայքայում, այսչափ տուներու եւ  
գիւղերու կործանում տեղի կունենայ 8-10 տարւայ մէջ՝  
չնորհիւ յոռի կառավարութեան:

Թող չկարծուի, թէ այս քիւրդ աղաները կառավարու-  
թեան ըմբոստ եւ անհնազանդ գտնելով, հակառակ անոր  
կամաց այսպէս կը վարին ու կաւրչտիկն երկիրը, ո՛չ, այս  
կողմերի նահանգապետէն մինչև յետին ոստիկանը կը վար-  
ձատրուին միշտ քիւրդ աղաներէն: Եւ արդէն ո՛վ են պաշ-  
տօնականները՝ ամենքն ալ աւագակներ, ամենքն ալ բարո-  
յապէս փճացած հրէշներ, որոնց նկարագիրը եթէ հանել  
ուզենք, շատ երկար պիտի ըլլայ. միայն հոս տեղն է խար-  
խնցի Ահմէտ աղայի այս գիւղերու մէջ ի գործ դրած մի  
քանի աւագակութիւններն ու խժոժութիւնները պատմե-  
լու: Ահմէտ աղա, աւագակութեամբ հարստացող, 10-12  
տարիէ ի վեր գրեթէ շարունակ վարչական ժողովոյ (մէճ-  
լինը խտարէ) անգամ է՝ այս կողմի հայերու պատուհասը:  
1890 թ. աչունը Թըւնիկ գիւղի մէջ առեւտուր ընող եր-  
մակացի երկու եղբայրք Բանդեհան Պետրոսի եւ Նշանի 120  
լլրացի՝ արժողութեամբ ժամեփակտուրայի սուղանքը, ի-  
րեն մարապութիւն ընող երգումի, որ Թըւնիկէն հազիւ կէս  
ժամ հեռաւորութիւն ունի, Գառաւանքի քրդիք, իրիկան  
ժամը 2-ին անխղճով թալլելով կը տանին: Ահմէտ աղա  
մասնաւոր բաժին մը կը ստանէ թալլողներուն. մնացած ամ-  
բողջ 100 լլրացի չափ կը մնայ իր քով: Բանդեհան եղբայրք  
շատ լաւ ճանչցան յերուզակները, Մամախաթուն, Երգնկա,  
Վարին շատ ալ աշխատեցան ու գրամ ծախսեցին, բայց  
չկրնալով երբէք լսելի ընել տալ իրենց բողբոքները, մնացին  
խեղճ ու թշուառ:

1894 թ. յունուար ամսոյ մէջ Ծաղկարի գիւղի կամ ա-  
ւելի ճիշտը՝ այդ կողմերի միակ հարուստ Զարմանին տղո-

ցը տունը կը մտնեն գիշեր մը Ահմէտ աղայի մարդիկը եւ  
տունը գանդողներուն: այր եւ կին մարդոց ձեռքերն ու ոտ-  
քերն կապելով՝ սոսկալի շարչարանքներով կը տառապե-  
ցնեն խեղճերը եւ կը սպառնան ամեննքն ալ սրի անցնել,  
եթէ չյանձնեն ունեցած ոսկինին: Կանանց ամբողջ զարդե-  
րը եւ նեղ օրւան համար պահած 150 ոսկինին կը յանձնեն  
յերուզակ գողերուն, որք՝ տնեցիներուն մի քանիսը արդէն  
վիրաւորած՝ կը մեկնին: Զարման տղաքը, ինչպէս նաև զը-  
րացիները կը ճանչնան յերուզակները եւ կը հասկնան որու  
գրգումը ըլլալը, բայց գործին մէջ Ահմէտ աղան ըլլալուն  
համար չեն համարձակեր ձայն հանել:

1893 թ. սեպտեմբերի մէջ խարխնցի Ղեյբը աղայէնց  
Բէճէպին եղբայրը Հերանիի Նրաղացը ցորեն կը տանի ա-  
ղալու. երբ կը տեսնէ, որ նոյն գիւղացի Բէյիզէնց Ակոյին  
ցորենները կաղցրին, կը հրամայէ՝ որ անոր ցորենները դա-  
տարկին իրենները լեցուն աղցուելու: Մարդը գիտել կու-  
տայ, որ քիչ մը մնացել է, իրենից մի ժամէն կը վերջա-  
նայ: Մտիկ չընէր Բէճէպին եղբայրը եւ կերթայ Նուրին խը-  
րամը քակելու: Հերանցիք չեն թողուր: Խարխնցի թուրքը  
կը զայրանայ, կը կատողի, բայց տեսնելով, որ միայնակ  
բանի չպիտի կրնայ ոչինչ ընել, կը վազէ գիւղը՝ ելլօր լուր  
կուտայ. եղբայրն ալ Բէճէպ Ահմէտ աղայի փեսայ Չէտե-  
րին ձայնելով՝ մէյմէկ մարթիի կառնեն եւ կը վաղեն Նը-  
րաղացը: Հայերը երբ սրանց կը նշմարին, կը փախչին լեզի  
պատառ. միայն Բէյիզէնց Ակոյն ետ կը մնայ: Կը հասնին  
բարրարտները, Բէճէպ մարթիին քաշելով երկու գտառ-  
կաւ խեղճ մարդը ծանրապէս կը վիրաւորէ, որ կը սապա-  
լէ գետին: Ստով ալ չը բաւականանալով, մարթիները ձեռ-  
քերը կը մտնեն գիւղ՝ Հերանի, դեռ ուրիշներն ալ սպանե-  
լու մտքով, բայց գիւղացիք սարսափած կը փախչին տու-  
ներն եւ կը փակին դռները: Մի քանի ժամ վերջ, երբ կը  
մեկնին կատղած ոճրագործները, գիւղացիք կերթան պատ-  
զարակով Ակոյն կը բերեն գիւղը: Յաջորդ օրը կը բողբոքի  
մէքքէզը. բժիշկ, պաշտօնականներ կուգան, օրբօրթ կուտան,  
նախնական քնութիւն մ'ալ կը կատարին եւ ոճիրներուն  
ըրածը կը հաստատուի: Ակոյն պատղարագով մէքքէզը կը  
տանին, հոն ալ դարձեալ քննութիւնով կը հաստատուի Բէ-  
ճէպին ու Ղեյբերին ոճիրը գործած ըլլալնին: Դատարանէն  
4-5 ամսուայ մէջ մի քանի անգամ ճէլլա կը զրկուի ետև-  
նուն, բայց ճէլլա պանող ոստիկանը՝ Ահմէդ աղայի խա-  
թէրը համար, ամեն անգամ ալ մի քանի դուրուչ առնել  
լով կերթայ կրսէ՝ թէ գիւղը չկային: Այսպէս կը մարթի  
խնդիրը: Ակոյն տան ամիս անխղճոյ ծառայելէ վերջ, հա-  
զիւ կաղապի, ալ ձեռքն եւ սրունքը ծանրապէս հաշմած:

Դարձեալ 1893 թ. սեպտեմբերի մէջ, Ծաղկարիէն նոյն  
գիւղացի երկու աղքատ հայ կին Աղաթեր գացած ժամա-  
նակին՝ ճամբան տեղացի թուրքերէն նախ կը լլլին եւ  
յետոյ սրախտոյ կը լինին: Եղեռնագործները յայտնի լինե-  
լով հանդերձ, քննութուն իսկ չկատարուի այս բռնութեան  
խեղճ գոհերու հաւար:

Պօլսու-կոմիտէս հաճի Տեղապետի սպանման նոսագիրը, որ ստա-  
ցանք ամսոյ 5-ին (ս. տ.), անմիջապէս տպագրելով տաւանին  
թերթիկների վրայ, ցրեցինք:

Թէև «Ազոթի 3-ի ցոյց» թղթակցութիւնը ուշ ստացանք,  
բայց եւ այնպէս հարկ համարեցինք գետեղել այն ներկայ Ռե-  
ուս, իրեն արձանագրութիւն թէ Պօլսում գտնուող սպանուիտ  
հպատակները եւ թէ սուրեցիների մի յայտնի մասի տրամա-  
դրութեան:

Մեզ դիմողներին յայտնում ենք, որ թէ «Դոզալը» եւ թէ  
մեր միւս հրատարակութիւնները ծրի են ուղարկում:

Դաշնակցութեան անձամբօրներից ինդուում է թղթակցութեան  
եւ ներատուութեան համար դիմել:  
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան